

ԻԶԱՖԵՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՐԴ ԲԱՌԵՐԸ
ՊՈԼՍԱՀԱՅ ԲԱՐՔԱՌՈՒՄ

Ներկա հոդվածը նվիրված է հայ-թուրքական լեզվաբանական առնչություններին, մասնավորապես՝ «Armeno-Turcica» պրոբլեմին վերաբերող քիչ ուսումնասիրված հարցերից մեկին, որը գրավել է մի շարք հայագիտ-թուրքագետների՝ Հ. Աճառյանի, Ֆ. Ֆոն Կրայլից Բրայֆենհորստի, Մ. Լեիցկու ուշադրությունը՝ սկսած մեր դարի սկզբնական շրջանից։

Հ. Պարոնյանի ստեղծագործություններից քաղված նյութի հիման վրա մենք քննում ենք պոլսահայ բարբառում գործածվող թուրքական բարդ բառերի կառուցվածքային ու իմաստաբանական առանձնահատկությունները, որոնք թուրքերեն լեզվում ներկայացնում են իզաֆետային կառուցվածք։

Թուրքերենում գոյականներն ունեն ատրիբուտիվ կապի յուրօրինակ կառուցվածք, որն ընդունված է անվանել իզաֆետ։ «Թուրքական իզաֆետը զուգակցում է երկու այնպիսի գոյականներ, որոնցից մեկը դրված լինելով սեռական կամ անորոշ հոլովով, որոշիչ, և միաժամանակ լրացուցիչ է մյուս գոյականի՝ իր որոշյալի և լրացյալի համար»¹։

Գոյովթյուն ունի իզաֆետի երեք տեսակ։ Այս բաժանման համար հիմք են ընդունված ձևաբանական հատկանիշները։

1. Բզաֆետը կազմվում է երկու մասնիկներով։

Նրա առաջին բաղադրիչը-որոշիչը ընդունվում է սեռական հոլովի մասնիկ, երկրորդը՝ որոշյալը, երրորդ զեմքի մասնիկ՝ երկու թվով։ Օրինակ.

orman-ın güzelliğ-i «առտառի գեղեցկությունը»

ın — սեռական հոլովի ցուցիչը

i — երրորդ զեմքի ցուցիչը

orman-lar-ın güzelliğ-i «առտառների գեղեցկությունը»

2. Իզաֆետը կազմված է միայն երրորդ զեմքով և երկու թվերի որոշյալին կցվող ցուցիչով (մասնիկով), իսկ որոշիչը դրված է հիմնական հոլովով։ Օրինակ.

çocuk eğlence-si «երեխայի զվարճալիք»

çocuklar eğlence-si «երեխաների զվարճալիք»։

3. Առանց ցուցիչի կազմված իզաֆետ, որի երկու բաղադրամասն էլ դրված են հիմնական հոլովով։ Օրինակ.

taş köprü «քարե կամուրջ»։

Պոլսահայ բարբառում լրիվ բացակայում է առաջին կարգի իզաֆետը, իսկ երրորդ կարգինը՝ հազվադեպ է։ Գործածական է երկրորդ կարգի իզաֆետը։ Պոլսահայ բարբառում թուրքական փոխառությունների ալոորինակ բնույթը պետք է բացատրել թուրքերեն լեզվի յուրահատկությամբ։ Այստեղ իզաֆե-

¹ С. С. Майзель, Изафет в Турецком языке, М.—Л., 1957, стр. 13.

տը ոչ միայն բառակապակցության, այլև բառակազմության և մասամբ տերմինակազմության միջոց է: Սակայն այն հավասար չափով չի մասնակցում բառակազմությանը և տերմինակազմությանը: Այս իմաստով առանձնապես կիրառաշատ է երկրորդ կարգի իղաֆետը, և դա այն պատճառով, որ առաջին կարգի իղաֆետը հակադիր առարկաներ կամ երևույթներ ներկայացնող երկու գոյականների որոշիչ պոսեսիվ կապի արտահայտություն է:

Բացի այդ առաջին կարգի իղաֆետը իր անդամներից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին որոշիչներ կարող է ընդունել, որն ավելի է կոնկրետացնում առաջին կարգի իղաֆետի բովանդակությունը:

Երկրորդ կարգի իղաֆետն իրենից ներկայացնում է երկու այնպիսի գոյականների որոշիչային համադրում, որոնք արտահայտում են առարկաները կամ երևույթները իրենց ընդհանուր, ոչ կոնկրետ իմաստով: Երա հետևանքով էլ բոլոր դուգակցումներն ունեն ոչ կոնկրետ բնույթ: Այդ դուգակցումը հիշեցնում է միատեսակ, թեկուզ և բարդ արտահայտություն և շատ հաճախ տրամաբանական բնույթի կայուն բառակապակցություններ է ստեղծում:

Պոլսահայ բարբառի թուրքական փոխառությունների ճնշող մասը իղաֆետի երկրորդ կարգին է պատկանում և իրենից ներկայացնում է կայուն, ոչ հազվադեպ տերմինականացված բառակապակցություններ, որոնք միասնաբար մտել են պոլսահայերի բարբառի մեջ: Վերջինս չունի այնպիսի իղաֆետային կապակցություններ, որոնք ստեղծված լինեին բուն իսկ պոլսահայ բարբառում, հետևապես իղաֆետը գոյականների նոր որոշիչային կապակցություններ ըստեղծելու ընդունակ քերականական կենդանի ձև չլիներ: Բացառություն են կազմում թուրքերենից փոխառված իղաֆետային կապակցությունները: Եթե այդ փոխառյալ բառակապակցությունները քննելու լինենք թեմատիկ առումով, ապա կտեսնենք, որ բոլոր օրինակները ճաշատեսակների, հիվանդությունների, մասնագիտությունների և այլնի անուններ են:

Օրինակներ.

...քալուֆ կեոֆսուն մենակ ուտել հա, կտորկիկ ալ բարեկամաց համար չեն պահեր... հ. 9, էջ 264:

tavuk «հավ»

göğüs «կործք»:

tavuk göğsü — թավաք կեոքսու. «քաղցր տեստի անուն է, որ պատրաստվում է հավի մսով ու կաթով»

...ա՛յն աչքերը ոչ չիրոզ սալաքաք կը չինեն, ոչ ալ բանթալունի կոճակ կը կարեն... հ. 6, էջ 17:

ciroz «մանր սկումբրիա» (արևի տակ չորացրած)

salata «սաղյան»

ciroz salatası — չիրոզ սալաթասը «սկումբրիայով սաղյան» (ձկան)

...տիկին, եթե իրմիկ հելվասին չի պիտի եփեիք, ինչո՞ւ խաղաղիք թավլան ու տարվեցիք... հ. 9, էջ 266:

irmik «սպիտակահատ ձավար»

helva «հավլա»

irmik helvası — իրմիկ հելվասի «հավլայի մի տեսակի անվանումն է»:

...չաքարը չմոռա... հայն որ կանաչ բլլա, ալան քալունին վրան խորդ ու բորդ չբլլա:

- agaç «ծառ»
kavun «սեխ»
agaç kavunu — աղան քաղնի «ցիտրոն» (լիմոնի ծառի մի տարատեսակը)
...նիյեր քաղասիյեն չե՞ս առնիր քիչ մը... հ. 7, էջ 229:
ciger «թոք»
tava «տապակ»
ciger tavası — ճիլեր թավասի «մանր կտրատած, տապակած թոք»
...անոր սառը օդի և իշկեմալ չորպասի հրամցուր... հ. 9, էջ 269:
ışkembe «փորոտիք»
çorba «սպուր»
ışkembe çorbası — իշկեմալ չորպասը «փորոտիքով սպուր»
...լահանա բուրջիսիյով պարտք կվճարվի՞... հ. 6, էջ 173:
lahana «կաղամբ»
turşu «թթու»
lahana turşusu — լահանա թուրջուսի «կաղամբի թթու»
...և՛, քիչ մը ելմեր քարայիֆի ըլլա նե՛ պե՛շ չըլլար... հ. 9, էջ 317:
ekmek «հաց»
kadayıf «խմորեղեն, որ պատրաստվում է հացով ու շաքարահալով»
ekmek kadayıfı — եքմեք քաթալիֆ «շաքարահաց»
...չկա, եթե կուզեք պուտ քեզապի մը տամ... հ. 8, էջ 379:
but «ազդր»
kebab «խորոված»
but kebabı — պուտ քեզապի «ազդրի խորոված»
...ևս հասկցա, որ պ. Թիերը տեսուչին ուղեղն ալրելով պեյին քավաը պիտի ընհր... հ. 10, էջ 306:
beyn, beyin «ուղեղ»
tava «տապակ»
beyin tavası — պեյին թավասը «տապակած ուղեղ» (ուտեստ):
...արեկեղան խնդիրն այսք բաշասի է... հ. 4, էջ 36:
ayak «ոտք»
paça «ոտնակոճ»
ayak paçası — այաք բաշասի «խաշ»
...յուժուորա սալաքասի հղած հս... հ. 6, էջ 169:
yumurta «ձու»
salata «աղցան»
yumurta salatası — յուժուրթա սալաթասի «ձվի աղցան»
...նինա յաղի առինք չոճուխին համար... հ. 6, էջ 46:
Hint «Հնդկաստան»
yağ «ջուղ»
hint yağı — հինա յաղը (բառացի հնդկական յուղ), «կանեփի ձեթ»
Վերը բերած բոլոր օրինակները ուտեստների անուններ են, այսպես կոչված խոհանոցային տերմինոլոգիային են վերաբերում:
...նշանավոր է նաև այս թաղին սոյուն պաշին... հ. 4, էջ 165:

koyun առշխարձ, գառձ, ճիմարձ

baş ագլուխձ

koyun başı—քոյուն պաշի ճիմարների ալագձ, ճիմարապետձ

...քալեմ օտասիցներու մեջ գտնվող քլաթիպներու հարցուր... հ. 10, էջ 75,

kalem ագրիչձ, ագրասնչակձ

oda սսնչակձ

kalem odası—քալեմ օտասի ագրասնչակձ

...հետաքրքիր մարդուն ականջները սրվակի հաճամաք շիշեսի կընմանին...

hacamat աարյուն թողնելձ

şişe սարվակ, շիշձ

hacamat şisesi—հաճամաթ շիշեսի արժեկական սրվակձ

...Բգմիրի կուսակալը վարչության հետ քար թովու կը խաղա կոր կարծես... հ. 6, էջ 78,

kar աձյունձ

top ագնդակձ

kar topu—գար թուփու աճնագնդիձ

...քալց քալելու ուժ չունիմ, սոսկալի յուրեք սիւրմեսի մը... հ. 1, էջ 219,

yürek սսիրտձ, ճոգիձ

sürme սսյուրմաձ

yürek sürmesi—յուրեք սիւրմեսի չլուծձ

...որչափ ըլլա նե՝ դրսեցի է շեմիլ ուշադը չէ... հ. 10, էջ 99,

şehir աքաղաքձ

uşak աժառա, երիտասարդ, պատանիձ

şehir usadı—շեհիր ուշադը աքաղաքի տղաձ

...մեկը լեզալեք դազլքասի ըսավ... հ. 10, էջ 286

rezalet աամոթձ, ճիայտառակութունձ

gazeta աթերթձ

rezalet gazetası—րեզալեթ դազլթասի ճիայտառակ թերթձ

...միթե շատ մը տուններուն վրա պատուհաններ չկան, որոնց յանկըն պահաւը կրսեն... հ. 8, էջ 121,

yangın ճհրդեհձ

baca աժինեկուլլաձ

yangın bacası—յանկըն պահաւը ճհրդեհի խողովակձ

...ահա ալդ գետին խալըխճինները մեր պալըլի բազարին խալըխճիններն ըլլալու էին... հ. 8, էջ 41,

balık աժուկձ

pazar աշուկաձ

balık pazarı—պալըլի բազարի աժկան շուկաձ

...խուրպան պալլամին ծախքերուն համար... հ. 4, էջ 127,

kurban ագոհձ

bayram ատոնձ

kurban bayramı—խուրպան պալլամի ագոհարերության տոն (մուսուլմանների մոտ)

- ...հս ալ հետեյալ առտուն շիտակ պիտ բազարը դացի... հ. 10, էջ 10,
bit «ոշիլ»
pazar «շուկա»
bit pazari—պիթ պազարի «հնոտիք վաճառելու շուկա» (սե շուկա)
...նամակ մը կը գրի և օտաւ պաշիյի մը կը տանի... հ. 10, էջ 139.
oda «սենյակ»
baş «աւագ, պետ»
odabaşı—օտապաշի «դռնապան»
... օ դեկտեմբեր, դուն ալ, ինչպես կըսեն ռամկորեն, սաղլամ աչաք
գապը մը չես, բնավորութիւնները կըփոխես մարդոց... հ. 7, էջ 277,
ayak «ոտք»
kap «աման, անոթ»
ayakkabi—աչաք գապը «ոտնաման, կոշիկ»
...իչ աղըսը մը տնիմ... հ. 6, էջ 298.
իչ «նեքին օրգաններ, ներքին մաս»
ağrı «ցաւ»
իչ ağrısı—իչ աղըսը «ներքին հիւանդութիւն»:
Ինչպես երևում է վերը բերած, բացառապես իզաֆետի երկրորդ կարգին
պատկանող «առարկայաբար արտահայտուած հարաբերութիւն» ցույց տվող
օրինակներէց, դրանք բոլորը մեկ հասկացութիւն, մեկ առարկա են ցույց
տալիս:
Հայերեն լեզվի Պոլսի բարբառի կազմի փոխառնված իզաֆետային երկ-
րորդ կարգի կառուցվածքները հայերեն համատեքստում ընկալվում են որպէս
մի բարդ բառ, թիկ հաճախ անջատ են գրվում:
Փոխառնված կապակցութիւնները վերաբերում են թուրքերենի արարա-
դիր շրջանին, երբ դերադասվում էր իզաֆետային անդամների անջատ գրու-
թիւնը:
Փոխառնալ թուրքական կապակցութիւնների հայկական ուղղագրութեան
մեջ եղած արտահայտութեան (կապակցութիւնների անդամները անջատ կամ
միասին գրելը) պատճառը փոխառութիւնների բանավոր լինելն է, ինչպես
նաև թուրքերենի ուղղագրութեան արարատառութեան հիման վրա ձեռք բերած
յուրահատկութիւնը:
Երրորդ կարգի իզաֆետային կառուցվածքը պոլսահայ բարբառում շատ
ավելի հազվագեղ է:
Օրինակներ.
...տրիշ ֆիսթաններու տեղ պամա ֆիսթան հագիր... հ. 11, էջ 68:
basma «չիթ»
fistan «կանացի զգեստ, հագուստ»
basma fistan—պամա ֆիսթան «չիթի զգեստ»
...բարեհաճեցեք չալլարին ըսել որ կյալուր բիճը քիչ մը քիչ դոր-
ծածե... հ. 9, էջ 361,
gâvur «խառնածին, վիժվածք, ճիւղաղ»
pic «ստոր, անպիտան, ապօրինի ծնունդ»
gâvur pic—կյալուր բիճ «հալոյտնք»

² С. С. Майзель, Изафет в турецком языке, стр. 43.

... դրսեցի ըլլալուն չի նայիր տե՛կեր հոս ալ լրագիր կը հանե քաշեր քաֆալը... հ. 10, էջ 99:

kaşar «պանրի տեսակ»

kaialı «գլխով», «անիկիք», «կարճամիտ»

kaşar kafalı—քաշեր քաֆալը «բովթ, տկարամիտ»

...տեմիր պաշ քահանան ուխտ ըրած է... հ. 4, էջ 158:

demir «երկաթ»

baş «գլուխ»

demir baş—տեմիր պաշ «համառ, պնդաճակատ»:

Պրոֆեսոր Հր. Աճառյանը իր «Քննություն պոլսահայ բարբառի»³ ուսումնասիրության «Բարդ բառեր» գլխում բարդ բառերը բաժանում է չորս խմբի. 1) գրաբարից մնացած բարդ բառեր, 2) հայերեն նոր բարդ բառեր, 3) թուրքերենից հայերենին անցած բարդ բառեր, 4) հայերեն ու թուրքերեն բառերից կազմված բարդ բառեր:

Հայերենի քերականության կանոններով կազմված երկրորդ և երրորդ կարգի իզաֆետային փոխառյալ կառուցվածքները մենք դիտում ենք որպես տերմինաբանական բնույթի բարդ գոյականներ: Դրանք վերաբերում են պոլսահայ բարբառի բարդ բառերի Հր. Աճառյանի դասակարգման երրորդ խմբին:

Վերևում բերված օրինակների վերլուծությունը թույլ է տալիս մեզ հանգելու հետևյալ եզրակացությունների.

1. Թուրքական իզաֆետային կառուցվածքը (գոյականների ատրիբուտիվ բառակապակցությունը) կիրառություն չգտալ պոլսահայ բարբառում, օտար լինելով հայոց լեզվի կառուցվածքին:

2. Պոլսահայ բարբառ ներթափանցած իզաֆետային կառուցվածքի բարդ բառերը հանդես եկան թեմատիկորեն սահմանափակ օգտագործվող նեղ բնագավառում:

3. Նրանք բոլորը մտան պոլսահայ խոսակցական լեզվի մեջ որպես տերմինացված խոսքեր, կորցնելով իրենց քերականական կառուցվածքը:

³ Հր. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 169—176: